ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ

Բազմավաստակ հայագետ Գարեգին Կարապետի Հովսեփյանը (1867—1952) ծնվել է Ղարաբաղի Ջիվանշիր գավառի (Մարտակերտի շրջան) Մաղավուզ (Ջարգախլու) գյուղում։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի նորաբաց դպրոցում։ 1876 թ. ընդունվել է Ամարասի դպրեվանք, ուր մեկ տարի սովորելուց հետո տեղափոխվել է Շուշու թեմական դպրոցը։ 1882 թ. Գ. Հովսեփյանն ընդունվել է Էջմիածնի ճեմարանը և միաժամանակ զբաղվել հայագիտությամբ։ 1888 թ. ձեռնադրվել է սարկավագ, ապա նշանակվել Էջմիածնի Մատենադարանի տնօրեն և թանգարանի վարիչ։ 1892 թ. Գ. Հովսեփյանը հրատարակել է «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», «Սասնա ծռերը» և «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպերը։ 1892 թ. մեկնել է Գերմանիա և սովորել Բեռլինի, Լայպցիգի, Հալլեի համալսարաններում։ Ստանալով փիլիսոփայության գիտությունների դոկտորի աստիճան, 1897 թ. Գ. Հովսեփյանը վերադարձել է Էջմիածին և նշանակվել ճեմարանի տեսուչ, Հայոց պատմության և արվեստի դասախոս։ 1899 թ. նա հրատարակել է «Մխիթար Սասնեցի», «Խոսրովիկ Թարգմանիչ» և այլ ուսումնասիրություններ։ 1900 թ. ստանձնել է «Արարատ» ամսագրի խմբագրի, իսկ 1901 թ.՝ Թբիլիսիի հայոց թեմի առաջնորդի տեղապահի պաշտոնները։ 1901—1904 թթ. Գ. Հովսեփյանը եղել է Երևանի թեմական դպրոցի տեսուչ։ 1905 թ. աշխատել է իբրև Էջմիածնի ճեմարանի վերատեսուչ, իսկ 1907 թ.՝ դարձյալ «Արարատ» ամսագրի խմբագիր։ 1908—1914 թթ. նյութեր հավաքելու նպատակով նա շրջել է Հայաստանի հնագիտական վայրերը, ապա մեկնել Կ. Պոլիս, Երուսաղեմ, Ամասիա, Թոքատ, Սամսոն, Սեբաստիա, Զմյուռնիա, Բեռլին, 1914—1917 թթ. եղել է Էջմիածնի ճեմարանի տեսուչ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գ. Հովսեփյանը Էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովի նախագահն էր և մեծ օժանդակություն է ցույց տալիս արևմտահայ գաղթականներին։ Այնուհետև նա մասնակցել է Ն. Մառի ղեկավարած Գառնիի և Անիի հնագիտական պեղումներին, եղել է 1920 թ. Ալեքսանդրապոլում հիմնադրված համալսարանի առաջին դասախոսներից։ Թուրք նվաճողներից Հայաստանը պաշտպանելու նպատակով եղել է Կարսում, ուր գերի է ընկել և ուղարկվել Սարիղամիշ աշխատելու։ 1921 թ. փախել է գերությունից։ Վերադառնալով Էջմիածին, Գ. Հովսեփյանը շարունակել է հայագիտական գործունեությունը։ 1921—1922 թթ. աշխատակցել է «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» ժողովածուին, 1927 թ. նշանակվել է Ղրիմի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ, 1934 թ.՝ սփյուռքահայության հայրապետական լիազոր (նույն թվականին Մատենադարանում կազմակերպվում է նրա արխիվային ֆոնդը. (թղթ. № 83—97)։ 1938 թ. ընտրվել է Ամերիկահայ թեմի առաջնորդ, 1943 թ.՝ Կիլիկիայի կաթողիկոս։ 1928—1943 թթ. հրատարակվել է նրա «Խաղբակյանք կամ Պոռշյանք» մեծարժեք աշխատությունը։

Գ. Հովսեփյանի արխիվում պահվում են 1708 վավերագրեր, ինչպես նաև նրա տպագրված և անտիպ մի շարք աշխատությունների ձեռագրեր։

Նույն արխիվում են գտնվում Էջմիածնի, Բեռլինի, Փարիզի, Մյունխենի, Երուսաղեմի, Կ. Պոլսի և այլ քաղաքների մատենադարանների հայերեն ձեռագրերից Գ. Հովսեփյանի հավաքած հիշատակարանները, արձանագրությունները, ազգագրական, հնագիտական նյութեր, գրախոսություններ, դասախոսությունների ծրագրեր, պաշտոնատար անձանց ուղղված դիմումների, նամակների պատճեններ և այլն։

Գ. Հովսեփյանը նամակագրական կապերի մեջ է եղել հայ, ռուս, եվրոպացի նշանավոր հայագետների, գրողների և գիտության այլ գործիչների հետ։ Նրա արխիվում պահպանվել են Ղ. Ալիշանի, Ն. Բյուզանդացու, Ն. Ադոնցի, Ն. Ակինյանի, Ստ. Մալխասյանի, Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Ա. Ջամինյանի, Կ. Կոստանյանի, Ե. Լալայանի, Ե. Սամվելյանի, Մ. Օրմանյանի, Հ. Թումանյանի, Ա. Թամանյանի, Ա. Ջոպանյանի, Ս. Մանգինյանի, Գ. Լևոնյանի, Մ. Խրիմյանի, Ս. Պալասանյանի, Ե. Տեր-Մինասյանի, Ե. Թադեոսյանի, Կ. Կուսիկյանի, Ա. Ալպոյաճյանի, Ե. Շահազիզի, Վ. Փափազյանի, Վ. Հացունու, Մ. Սարյանի, Յու. Վեսելովսկու,

Տիրայր վարդապետի և այլոց նամակները՝ հասցեագրված Գ. Հովսեփյանին։

Նկարագրվող արխիվում են պահվում Գ. Հովսեփյանին վերաբերող զանազան պաշտոնական գրություններ, գիտական արժեքավոր նյութեր, նկարներ, բացիկներ, նշանավոր մտավորականների լուսանկարներ, ալբոմներ, հայկական նոտաներ, նվիրատվությունների մատյաններ և այլն։

Պահպանվել են նաև մի շարք հայագետների առանձին ուսումնասիրությունների ձեռագրեր, որոնք ժամանակին նրան տրվել են կարծիքի. դրանցից են՝ Մեսրոպ վարդապետի «Կենդանագրի ծագումն ու զարգացումը հայ մանրանկարչության մեջ», Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի «Սուրբ Էջմիածնի միաբանության դրական-կրթական գործունեությունը և մայր աթոռի առարանը»[1], «Համառոտ պատմություն Սյունյաց թեմի վեց նշանավոր վանքերի», Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին հայոց» և այլ աշխատություններ։

Այսպիսով, Գ. Հովսեփյանի արխիվը հայագիտության զանազան հարցերի մասին հարուստ նյութ է պարունակում։

Ա. Ե. ԱԴԱՄՅԱՆ

---

1 Այս հետազոտությունը հրատարակվեց հայագետներ Սուրեն Քոլանջյանի և Արթուն Հատիայանի աշխատասիրությամբ (Ս. Էջմիածին, 1973)։